


# Ի՞նչ է COVID-19-ը



## Ի՞նչ է COVID-19-ը


COVID-19-ը հիվանդություն է, որն առաջանում է SARS-CoV-2 վիրուսից: Այն տարածվում է մարդկանց միջև հիմնականում օդային ճանապարհով: Շատերն ունենում են մեղմ ախտանիշներ կամ նույնիսկ ախտանիշներ չեն ունենում, սակայն COVID-19-ը կարող է նաև ծանր հիվանդության և մահվան պատճառ հանդիսանալ: Մարդիկ կարող են տարածել վիրուսը, նույնիսկ եթե ախտանիշներ չունեն:

## Որո՞նք են ախտանիշները

COVID-19-ի ախտանիշները հաճախ նման են մրսած կամ գրիպով հիվանդ լինելու ախտանիշներին: COVID-19-ով վարակված շատ մարդիկ երբեք չեն հիվանդանում:

Ընդհանուր ախտանիշները ներառում են՝

- Համի կամ հոտի կորուստ
- Հազ
- Դժվարացած շնչառություն
- Ջերմություն կամ դող
- Հոգնածություն
- Մկանային կամ մարմնի ցավեր
- Կոկորդի ցավ
- Զթի փակվածություն կամ քթահոսություն
- Սրտխառնոց կամ փսխում
- Փորլուծություն



COVID-19-ը կարող է առաջացնել նաև այլ ախտանիշներ:

## Երկարատև COVID

Որոշ մարդիկ COVID-19-ով վարակվելուց հետո շաբաթներ կամ ամիսներ շարունակ տառապում են նոր կամ շարունակվող ախտանիշներից: Սա հայտնի է որպես երկարատև COVID կամ հետ-COVID: Սա կարող է ներառել այն մարդկանց, որոնք վարակված ժամանակ չունեին ախտանիշներ կամ ունեին մեղմ ախտանիշներ:

Երկարատև COVID-19-ը ներառում է ախտանիշների լայն շրջանակ, ներառյալ՝ հոգնածություն, գլխացավ, հոդերի կամ մկանների ցավ, տրամադրության կամ քնի փոփոխություններ, շնչառական ախտանիշներ և մտածելու դժվարություն:

## Ովքե՞ր են գտնվում ամենաբարձր վտանգի ներքո

- Մեծահասակները և երեխաները, որոնք ամբողջովին պատվաստված չեն, գտնվում են COVID-19-ով վարակվելու ամենաբարձր վտանգի ներքո:
- Չպատվաստված տարեցները, ովքեր ունեն որոշակի առողջական խնդիրներ, գտնվում են COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու և մահանալու ամենաբարձր վտանգի ներքո:

